

Աշխեն ՄԻԶԱՅԵԼՅԱՆ

Ուսու-հայկական (Սլավոնական) համապարան

ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ Է. ՓԱՌԽԵՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ուիլյամ Բարթեր Յեյքսը Եզրա Փառւնդին անվանել է «միայնակ հրաբուխ», Զեյմս Ջոյսը «անկանխատեսելի էլեկտրական խորց», բանաստեղծուինի Հիլբա Դուլիքը, բանաստեղծի առաջին սերը, անվանել է «զիգզագաձև կայծակի մրրիկ», Ուինդեմ Լյուիսը «գրականության մեջ՝ Տրոցկի» և «մանկավարժական հրաբուխ»:

Տարբեր տարիների Եզրա Փառւնդին դիմել են օգնության համար, կարդում էին նրան իրենց ստեղծագործությունները հավանության կամ քննադատության ակնկալիքով. Հեմինգվուեյը, Էլիոթը և նոյնիսկ Ուիլյամ Բարթեր Յեյքսը, որը թեև քանի տարով մեծ էր Փառւնդից, բայց փոքր եղբայրակցի ազդեցությունն ընդունում էր:

Թոնաս Սթեննս Էլիոթը, որի բանաստեղծություններն ու պոեմները Փառւնդը խմբագրել է, 1946 թ. գրում է. «Փառւնդը չի ստեղծել բանաստեղծներ, բայց նա այնպիսի միջավայր է ստեղծել, որը առաջին անգամ առաջացել է մողեռնիզմի ուղղությունը, որին մասնակցել են ինչպես անգլիական, այնպես էլ ամերիկյան բանաստեղծները, ծանրացել միմյանց աշխատանքների և ազդել միմյանց վրա» /Eliot, 1985/:

Նրա գաղափարներից շատերը կանխորոշեցին ամերիկյան մոդեռնիզմի ազգային առանձնահատկությունները: Ա. Ս. Զվերևը նշում է, որ «երիտասարդ Փառւնդի ներդրումը անգլիակեզու պոեզիայում վիրխարի է. առանց նրա իրականացրած վերափոխությունների և առանց նրա սեփական քննարերգության այն ամեններն էլ չեր լինի այնպիսին, ինչպիսին մենք գիտենք այն» /Յերեւան, 1991: 208-229; 224/:

Նրա ստեղծագործություններում գերիշխում են համաշխարհային պոեզիային բնորոշ թեմաներ ու ժանրեր՝ սկսած հին ժամանակներից, որոնք հարստանում են բանաստեղծի ներկա դարաշրջանին հարազատ բովանդակությամբ, ինչի հետևանքով էլ ստացված հակադրությունը դառնում է բանաստեղծական գլխավոր նպատակ: Ա. Ս. Զվերևը կարծում է, թե «Փառւնդը նպաստում է ավանդույթների ստեղծագործական վերանայմանը, որը հարստանում է բանաստեղ-

ծական նոր սերնդի փորձարարություններով, որպեսզի այդ միաձուլումից ծագի բանաստեղծական լեզու, ինչը պահանջում է ժամանակը» /Յերե, 1994: 533–544; 537/:

Հստ Փառնիդի, պոեզիան կոչված է հասկացություններին վերադարձնել նախնական իմաստը՝ իր տեսակի հեղափոխություն կատարելով լեզվով, գիտակցությունը առասպելներից ազատելու նպատակով, ինչը հաստատվել էր բուրժուական դարաշրջանում։ Նրա կարծիքով, պոեզիան լեզվի «նորացման» ու «գտնման» իր հիմնական ֆունկցիան կատարել է միայն նրանց ստեղծագործություններում, ովքեր «ինչ-որ նոր բան են հայտնագործել» /Pound, 1970: 54/։ Փառնիդը կարծում էր նաև, որ ինչպես իմքն է կախված անցյալի պոեզիայից, այնպես էլ անցյալն է կախված իրենից, քանի որ առանց նրա միջնորդության անցյալը չի կարող «վերակենդանանալ» ներկա ժամանակի մեջ։ Նա ստիպված էր իրեն հավասարը փնտրել մեռած բանաստեղծների մեջ, ովքեր պատկանում էին տարրեր ավանդույթների ու տարրեր ժամանակների, քանի որ այդպիսիք չեր գտնում ժամանակակիցների մեջ /Պայնդ, 1997: 550/։

Ստեղծագործական պրոցեսի բնույթը Փառնիդը դիտարկում էր «Ռոմանական գրականության ողին» (*The Spirit of Romance, 1910*), «Լուրջ արվեստագետ» (*The Serious Artist, 1913*), «Ստեղծել նորը» (*Make it New, 1913*) աշխատանքներում։ «Ստեղծել նորը» դրույթում բանաստեղծ-մոդեռնիստների համար հիմնարար դարձավ ոչ միայն նոր ձևերի պահանջը, այլև՝ գեղարվեստական լեզվի համակողմանի թարմացումը ոիքմի, բառապաշտի, ստրոֆիկայի (բանաստեղծության տնատման)։ Տեսնել աշխարհը նորովի և արտահայտել այն բառով, գեղարվեստական պատկերով, նշանակում է աշխարհը վերադարձնել բնական վիճակին։ Նրա հետ մեկտեղ արվեստագետը դառնում է մարգարե և ստեղծագործության միջոցով իրականացնում է իր մարգարեական առաքելությունը։ «Լուրջ արվեստագետ» ծրագրային հոդվածում Փառնիդը արծարծում է ստեղծագործության բարոյական խնդիրները։ Նրա համար «լուրջ արվեստագետը» ոչ միայն հընթաց սահմանում է, այլև՝ գեղագիտական կատեգորիա։ Արվեստագետը անցյալի ստեղծագործական ժառանգության քննադատն է և ներկայի մշակույթը ստեղծողը /Pound, 1968: 33/։

Փառնիդի կարծիքով, «վերադարձը ակունքներին ոգեշնչում է կամ վերադարձ բնույթյանն ու իմաստին։ Նա, ով վերադառնում է

ակունքներին, ելնում է՝ մշտապես խելամտորեն վարվելու ցանկությունից: Իսկ դա նշանակում է՝ բնականորեն, իմաստավորված, ներընդունումով: Նա ծարավի է ոչ թե մանրախնդրության, այլ ներդաշնակության, նպատակահարմարության» /Փանդ, 1992: 68/: Ավանդույթը նրա ստեղծագործության մեջ միջոց է, որի օգնությամբ բանաստեղծը կարողանում է կարգի բերել այն նյութը, որն «առարված» է ներկա իրողությամբ: Փառնդը չէր ընդունում դեմոկրատական ու հետադիմական, առաջադիմական ու պահպանողական ավանդույթներ: Նրա համար կարևոր էր միայն գեղարվեստական ավանդույթը, ինչը առանձնահատուկ է արվեստի յուրաքանչյուր տեսակի համար և որը նրան առանձնացնում է արվեստի մյուս տեսակներից: Ավանդույթի ընկալումը նրա համար նշանակում է բանաստեղծի մերձեցումը ողջ արվեստի նախահիմքերին /Pound, 1968: 15/:

Փառնդը ձգտում էր վերակառուցել դասական ավանդույթը, չնայած նրա «Ուռմանական գրականության ոգին» գիրքը արձարծում էր ոռմանտիզմի վերածննդի գաղափարը: Անտիկ արվեստին վերադարձը ամերիկյան քննադատ Վան Վիկ Բրուսը անվանել է «գործնական անցյալ», ընտրովի ավանդույթը, որը հաղթահարում է ազնվագարմությունն ու գավառականությունը: Ավանդույթը Փառնդի համար «կոսմոպոլիտիզմ» էր՝ հիմնված այլ մշակույթները ծովելու ընդունակության վրա: Այսպիսով, արվեստի դերը միջնորդությունն է, իսկ արվեստագետները մեկնաբանողի: Սակայն սուկ արվեստագետի ճշգրտության շնորհիվ են ստեղծագործության մեջ պատկերված ողջ էությունները ձեռք բերում անմահություն» /Փանդ, 1997: 32/:

Անտիկ թեման Փառնդի ստեղծագործություններում ու քննադատական ուսումնասիրություններում առաջատարներից մեկն է: Հունա-հռոմեական ավանդույթը նրա ստեղծագործության մեջ և քննադատական աշխատություններում ավելի հաճախ զարգացում է ստանում պրովանսալյան բանաստեղծների ավանդույթների ֆոնին: Փառնդն իր ստեղծագործական ուղին սկսել է համաշխարհային մշակույթի լնիերքի փնտրություններից, որը նրան հասցրել է Սիցերկրածովյան ակունքներին՝ Հունաստանի ու Հռոմի անտիկ մշակույթին և ոռմանական մշակույթին, որը ծագել է հռոմեական զարդությունների տարածքում: Նրա հետ մեկտեղ Սիցերկրածովյանը բանաստեղծի աշխարհի ու մշակույթի միակ կենտրոնը չէր: Նա հոգևոր ապաստան էր փնտրում Եվրոպայում: Սակայն Փառնդի հոգևոր

կենտրոնը կա՞մ Պրովանսից Սիջերկրածով էր և հակառակը, կա՞մ միավորում էր թե՝ Պրովանսը, թե՝ Սիջերկրածովը՝ ըստ բանաստեղծի առաջընթացի /Gross, 1965: 213/:

Պրովանսը բանաստեղծին գրավում է ասպետական ոգով և գեղեցկության երկրպագությամբ: Բացի այդ, նա երկրպագում է տրուբարուրմերի վարպետության և պրեզիդյում նրանց ներոքած մոտ 900 հարուստ ձևերի առջև: Տրուբարուրմերը պահպանել էին անտիկ արվեստի լույսը և հերանոսությունը Խավար Սիջնադարում, որը կամքջակ էր անտիկ շրջանի և Վերածննդի միջև: Պոետ-մոդեռնիստը կարծում է, թե «Խավար Սիջնադարում Պրովանսը շատ ավելի քիչ էր Հյուսիսից ենթարկվել արշավների, քան մնացյալ ողջ Եվրոպան. եթե հերանոսությունը ինչ-որ տեղ էլ զաղտնորեն դիմացել էր, ապա հենց Լանգեդոկում: Ահա թե ինչ ոգով էր հազեցած Պրովանսը, որի հելլենականությունը աչքի էր զարնում յուրաքանչյուրին, ով համեմատում է «Հունական անբոլոգիան» տրուբարուրմերի ստեղծագործությունների հետ: Նրանք, այսպես թե այնպես, կորցրել էին աստվածների անունները, բայց հիշողության մեջ պահպանել էին սիրեցյալների անունները: Տպավորությունն այնպիսին էր, որ նրանց զիսավոր տերստերը Վերգիլիոսի «Էկոնոգները» և Օվիդիոսի ստեղծագործություններն էին» /Պայնդ, 1997: 55/:

Փառնդը ժամանակակիցներին կոչ է անում հարստացնել անգլիական պոեզիան՝ նրանում ներդնելով այլալեզու քնարերգության ողջ պաշարը, ինչն անում է անձամբ՝ տիրապետելով շատ լեզուների: «Վերածնունդ» (*The Renaissance*, 1912) էսեում նա գրում է. «Վերածննդի կամ զարթոնքի առաջին քայլը գեղանկարչության, քանդակագործության և գրականության նմուշների փոխառությունն է... Մենք պետք է սովորենք անցյալից ամեն բան, ինչ կարող ենք, մենք պետք է սովորենք այն, ինչ համանման հանգանաճներում այլ ժողովուրդներ բարեհաջող հաղթահարել են, մենք պետք է մտածենք, թե ինչպես են նրանք դա արել» /Pound, 1973: 219/: Այդպիսով, Փառնդը ձգուում էր վերածնել գրականությունն ու արվեստը Ամերիկայում և սկսել «ամերիկյան Վերածնունդը»: Չե որ ժամանակակից մարդն ընդունակ չէ գիտակցել մշակութային ավանդույթների իր ժառանգականությունն ու շարունակականությունը, եթե չքանում է անընդհատության զգացումը: Ա. Ս. Զվերևը նշում է, որ «բանաստեղծի շատ ժամանակակիցներ այդ ծրագրին վերաբերվում էին որպես զուտ

ուսովիայի, բայց նրանում քիչ արդյունավետություն չկար, ինչն ապացուցեց բանաստեղծն իր ստեղծագործությամբ» /Յերևան, 1991: 225/:

Փառնդի քնարերգությունը դասական նմուշների նմանակում չէ, քանի որ XX դարաշրջանի բանաստեղծի վերաբերմունքը անցյալի ավանդույթների նկատմամբ, դրանք յուրացնելու նրա կարողությունները կամ անկարողությունները և նրանց նոր հազեցում տալը իրապես վկայում են ժամանակակից քաղաքակրթության էության և ժամանակակից մշակույթի անելանելի ճգնաժամի մասին։ Փառնդն ասում է, որ «անօգուտ է և մակերեսային նմանակումը, քանի որ իրական օգուտ լինում է միայն այն դեպքում, եթե այն իրականանում է կա՞մ առավել մանրակրկիտ ժանության համար, կա՞մ այս կամ այն ստեղծագործական մեթոդի գործնական յուրացման նպատակով» /Pound, 1968: 69/։

Փառնդը հասկանում էր, որ անցյալն ու ներկան դատապարտված են անվերջ պայքարի և արդյունավետ համագործակցության, որը, իր հերթին, հարստացնում է անցյալն ու ներկան, քանի որ անցյալի հարությունը բանաստեղծին տախի է նրան անհրաժեշտ ավանդույթ, մշակույթ և բոլոր դարաշրջանների բանաստեղծական համագործակցությանը պատկանելու գգացում։ Նա երազում էր բանաստեղծների համաշխարհային միության մասին՝ բաղկացած «Հոմերոսի որդիներից», քանի որ նրա համար բոլոր բանաստեղծները ժամանակակից են, անկախ լեզվից, որով նրանք խոսում են, և դարաշրջաննից, որում ապրել են։

XX դ. պոեզիայի համար Փառնդը բացահայտեց անտիկ, պրովանսալյան, վաղիտալական, չինական, ճապոնական պոեզիայի արժանիքները և կանխատեսեց էլիոթյան ավանդույթի տեսությունը։ XX դ. 10-20-ական թթ. հենց ամերիկացիներ Էլիոթն ու Փառնդը եվրոպական կիրառության մեջ դրեցին ավանդույթի հասկացությունը, որը արվեստագետի համար նշանակում էր ոչ միայն անցյալի արվեստի նվաճումների ժառանգում, այլև՝ նյութի համակարգում, որը նրա առջև դնում էր ժամանակակից իրականությունը։

Այսպիսով, Փառնդի ստեղծագործության մեջ ավանդույթը առկա է մշտապես, որպես անդրադարձական ֆոն, որը լրացուցիչ կերպով լուսավորում ու ընդարձակում է մոդեռնիստական տեքստի շրջանակները։ Փառնդի համար, որը համաշխարհային գրական

ավանդույթների շարունակողն է և, առավել ևս, միջնորդ, որն ունակ է դարերի անշատական փորձը միավորել, ավանդութքը կարևոր է որպես անհատական և համընդիանուր փորձը պոեզիայում համատեղելու միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зверев А.М. Деревенский умник. К портрету Эзры Паунда. М., Иностранный литература, 1991.
2. Зверев А.М. Поэтический ренессанс. М., История всемирной литературы, 1994.
3. Паунд Э. Путеводитель по культуре. М., 1997.
4. Паунд Э. Избранные стихотворения. СПб.; М., 1992.
5. Eliot T. S. Introduction to Literary Essays of Ezra Pound // Literary Essays of Ezra Pound. L., 1985.
6. Gross H. Sound and Form in Modern Poetry. Univ. of Michigan Press, 1965.
7. Pound E. A Critical Anthology. London, 1970.
8. Pound E. Selected Prose. 1909–1965. N. Y., 1973.
9. Pound E. The Spirit of Romance. N. Y., 1968.

А. МИКАЕЛЯН – Литературная традиция в творчестве Эзры Паунда. – Эзра Паунд - один из самых влиятельных американских поэтов XX века, основатель американского модернизма. Паунд стремился возродить литературу и искусство, призывая современников обогащать поэзию, используя жемчужины иноязычной лирики. Он считал, что поэзия прежде всего совершаает революцию в языке. В произведениях Паунда всегда присутствовала традиция, которая осветила и расширила границы модернистского текста. Традиция для Паунда являлась «космополитом», который был основан на способности ассимилировать другие культуры.

A. MIKAYELYAN – Literary tradition in Ezra Pound's works. – Ezra Pound was one of the most influential American poets of XX century, the founder of American Modernism. He tried to revive literature and art calling his contemporaries to enrich poetry using all the reserves of the lyric poetry of other languages. According to Pound, poetry is aimed at revolutionizing the language. Tradition played an important role in Pound's works which enlightened and extended the limits of Modernism. Tradition for Pound was a «cosmopolitan» based on the ability to assimilate other cultures.